

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 57/3

25 դեկտեմբերի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 04.12.2012թ-ի նիստում քննության է առնվել «Համլետ և Տիգրան» ՍՊԸ 07.11.2012թ. դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի ՀՏ 11.09.2012թ. թիվ 2207710 արձանագրության և 16.10.2012թ. թիվ 2115949 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն «ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի ՀՏ պետի 14.08.2012թ. թիվ 2207710 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Համլետ և Տիգրան» ՍՊԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 11.09.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2207710 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է.

հարկային տեսուչ Միհրան Մովսիսյանի կողմից 11.09.2012թ-ին, ժամը 11:50-ին «Համլետ և Տիգրան» ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Զաքյան 2 հասցեում գործող խանութ-սրահից կատարվեց հսկիչ գնում 200 դրամի չափով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 11:54-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Հ հաշվետվություն 8000 դրամ արժեքով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: Հ հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 200 դրամը, մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն: և ժամը 11:55-ին նորից դուրս բերվեց Հ հաշվետվություն 200 դրամ ընդհանուր գումարով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից «ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի ՀՏ պետի կողմից 24.09.2012թ-ին հրապարակվել է թիվ 2115949 հանձնարարագիրը՝ ընկերությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ: Արդյունքում, 16.10.2012թ-ին կազմվել է թիվ 2115949 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

Հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ «ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի ՀՏ պետի 14.08.2012թ-ի թիվ 2207710 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2207710 արձանագրությունը, որով արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը և ղեկավարվելով «Հ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» «Օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով, տնտեսվարող սուբյեկտին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է ստուգանք 150.000 դրամի չափով:

«Համլետ և Տիգրան» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» «Օրենքի հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման

կարգի 1.6 կետի՝ <... Արձանագրությունը ստորագրում են հսկիչ գնում կատարող անձինք և տնտեսվարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, որն առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնում է գրավոր ...>:

<Համլետ և Տիգրան> ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Խաչատրյանը հրաժարվել է ստորագրել 11.09.2012թ. հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2207710 արձանագրությունը և 20.09.2012թ. << ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի ՀՏ է ներկայացրել գրավոր առարկություններ, որում մասնավորապես նշել, որ իրականում 11.09.2012թ-ին ժամը 11:50-ին հարկային տեսուչ Միհրան Մովսիսյանը չի մոտեցել ք.Երևան, Զաքյան 2 հասցեում գտնվող խանութ-սրահին և գնում չի կատարել: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ թիվ 2207710 արձանագրությունում նշված չեն վաճառողի անուն, ազգանունը, առկա չէ նաև վաճառողի ստորագրությունը (արձանագրությունը պետք է ներկայացվեր ստորագրման վաճառողին, որից հետո նոր ընկերության տնօրենին, ինչը չի կատարվել հարկային տեսուչի կողմից):

Բացի այդ, թիվ 2207710 արձանագրությունում նշված <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո վճարման արժեքը՝ 200 դրամը, մուտքագրվել է ՀԴՄ ժամը 11:50-ին հարկային տեսուչի կողմից առանց 200 դրամը վճարելու: Դրանով իսկ՝ հարկային մարմնի կողմից խախտվել է <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի հարկային մարմնի կողմից հսկիչ գնումների անցկացման կարգի 1.6 կետը, որի արդյունքում ընկերության վրա դրվել է ոչ իրավաչափ հարկային պարտավորություն:

22.10.2012թ-ին ընկերությունը ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի ՀՏ թիվ 2115949 առ 16.10.2012թ. ակտը, որն ընդունվել է հիմք ընդունելով 11.09.2012թ. թիվ 2207710 արձանագրությունը: Փաստորեն, ընկերությունը հայտնվել է անելանելի իրավիճակում և պարտավորված է վճարել 150.000 դրամի չափով տուգանք մի խախտման համար, որն իրականում չի կատարվել: Հարկային տեսուչները փորձում են ներկայացնել, թե նրանք իրականում գնել են 200 դրամ արժողությամբ ապրանքը՝ հացը, սակայն վաճառողի կողմից համապատասխան գումարի ՀԴՄ չի տրամադրվել: Այնինչ, իրականում նման գնում ընդհանրապես չի կատարվել և այդ իսկ պատճառով վաճառողն էլ համապատասխան ՀԴՄ կտրոն պարտավոր չէր տրամադրել:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է առոչինչ ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր-Նորքի ՀՏ թիվ 2207710 արձանագրությունը և դրա հիման վրա կազմված ստուգման ակտը:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և 11.09.2012թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2207710 արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-բողոքը հիմնավոր չէ:

Քննարկման ընթացքում հարկային տեսուչ Միհրան Մովսիսյանը նշեց, որ իր կողմից 11.09.2012թ-ին, ժամը 11:50-ին ընկերությանը պատկանող ք.Երևան, Զաքյան 2 հասցեում գործող խանութ-սրահից կատարվել է հսկիչ գնում՝ գնվել է 2 հատ մատնաքաշ տեսակի հաց, գումարով 200 դրամ: Մասնավորապես, գնված ապրանքի դիմաց վճարել է 1000 դրամ: Վաճառողը գանձել է 200 դրամը և վերադարձրել 800 դրամ մանրը: Որից հետո ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողներն ընկերության տնօրենին են ներկայացրել ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ընկերության տնօրենը ծանոթացել է և ստորագրությամբ ստացել է ուսումնասիրության հանձնարարագրի օրինակը:

Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների համապատասխան գործողություններով հիմնավորվել է վերոգրյալ գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, ժամը 11:54-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվություն 8000 դրամ արժեքով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 200 դրամը, մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 11:55-ին նորից դուրս է բերվել <Z>

հաշվետվություն 200 դրամ ընդհանուր գումարով: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները:

<Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն. <Սույն օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման համար հիմք է հանդիսանում նաև <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումը>:

<Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի>:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտով <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Արձանագրությունը և ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ